

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ.

ՊՈԶՏՊԱԼՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ԱՍՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆԸ

Վսեմափայլ Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարյան, Վեհափառ Տեր, Ամենապատիվ Արքազան Պատրիարք, սիրելի հայրենակիցներ և հյուրեր.

Մեծ գոհունակությամբ ողջունում ենք Հայաստան-Ափյուռք սույն առաջին խորհրդաժողովը և մաղթում իր ընթացքին կատարյալ հաջողություն:

Ամցյալում ևս մամարիմակ ձեռնարկումներ եղել են, սակայն մեծ ընդգրկում չեն ունեցել: Տա բարին Աստված, որ այս մեկը դրվի ամուր հիմքերի վրա, լինի ավանդական, տևական ու համապարփակ: Ոչ միայն խիստ ցանկալի է, այլև այսօր մեր ազգի, եկեղեցու և պետության համար նույնիսկ հրամայական է, որ Հայաստան-Ափյուռք գոյություն ունեցող առ այս մերթ տկար, մերթ քիչ ավելի գործում կապը դառնա հաստատուն և անշրջելի՝ ի շինություն և միություն մեր՝ ճակատագրի բերումով ֆիզիկապես տարանջատված, բայց հոգեպես, հոգևոր արժեքների և ինքնության առումով իր միասնականությունը պահպանած ժողովրդի հետագա երթը մեկ հեռանկարային ու լայնահուն ճանապարհի վրա դնելու համար:

Դարերի ընթացքում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին եղել է մեր ժողովրդի քրիստոնեական վարքագծի, լեզվի ու մշակույթի, գիտության՝ ու ազգային այլ ավանդությունների կրողն ու պահպանողը, իսկ պետականությունը կորցնելուց ի վեր՝ նաև աշխարհիկ իշխանությունների դերակատարն ու քաղաքականություն մշակողը: Այսօր պատկերն այլ է. այսօր մենք ունենք հայրենի պետություն: Անկախ բոլոր դժվարություններից, զրկանքներից, անկախ թափված այնքան թանկ արյան՝ մենք հայ ժողովրդի երջանիկ սերունդն ենք և դա պետք է գիտակցենք: Մենք տեսանք այն, ինչի մասին միայն երագել էր հայը դարեր շարունակ: Քանի-քանի սերունդ այդ երագը սոսկ փայփայել, ու անցել է և հիմա նրանց լույս հոգիները երանի են տալիս մեզ:

Այսօր Հայրենիքն ու Ափյուռքը կարիք ունեն փոխադարձ օգնության, աջակցության, սատարումի: Ափյուռքը, նյութական օգնությունից, կարևոր ներդրումներից զատ, պետք է դառնա կամուրջ, մոր ու նորովի մի կամուրջ՝ համաշխարհային գործընթացներում ինտեգրացնելու համար Հայաստանի գիտական, մշակութային, արտադրատնտեսական ներուժը, իսկ Հայրենիքը պիտի շարունակի լինել այն հողը, այն քուրան, որից հոգևոր-մշակութային էներգիա, ազգային շունչ ու ոգի պիտի առնի աշխարհի չորս ծագերում ապրող հայը՝ իր վրայից թոթափելով սոսկ կրոնական ու ազգային ներամփոփ համայնքի ներկայացուցիչ լինելու գաղափարը: Թիկունքում հզոր, անկախ հայրենիք ունենալը վերացական պայուրանք է այլևս, այլ հարատևության,

պետք չէ Սփյուռքը թողնել ստվերում՝ լինի ներքին Սփյուռքը թե արտաքին: Ընդհակառակը, դրանց ամենակարևոր ուժերը պետք է խմբավորվեն և միաբանվեն՝ մեկ դառնալով Հայաստան աշխարհի հետ՝ փորձելով միատեղ գտնել լուծումը բոլոր դժվարությունների: Սպրելով և կրթություն ստանալով տարբեր երկրներում՝ մեր հայրենակիցներն իրենց մտածելակերպի և գործելակերպի ոլորտները մշտապես հարստացրել են տվյալ երկրի թե՛ մշակութային և թե՛ տնտեսական բնագավառների նվաճումների ազդեցությամբ: Սենք պետք է կարողանանք օգտվել այդ զինանոցից: Սակայն ինչպես Սփյուռքի հայությունը, այնպես էլ հայաստանաբնակը, պատրաստակամության հետ մեկտեղ, պետք է ունենա նաև միևնույն ծնողի զավակը լինելու իրավունքն ու պատասխանատվությունը: Հայաստանն ամեն հայի հայրական, պապենական ժառանգությունն է՝ տալու և ամենուլ միարժեքությամբ: Կարծում ենք, այս խնդիրները համակարգված լուծելու համար անհրաժեշտ է համահայկական ներկայացուցչական մի մարմին: Խորհրդային իշխանության տարիներին գործում էր Սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեն: Գուցե արժե այսօր նոր, ավելի լայն հնարավորություններով ու լիազորություններով վերականգնել այդ կոմիտեն: Հույս ունենք, որ այս համաժողովի գլխավոր նպատակներից մեկն էլ կլինի նման մի մարմնի ստեղծումը:

Այսօր աշխարհում համայն հայությունն իր նպատակներն իրագործելու համար ունի երկու հիմնական կենտրոն. մեկը Սիածնաէջ ու Լուսավորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, մյուսը՝ հայոց ճորանկախ պետությունը, որոնց համագործակցությունը պետք է լինի նպաստավոր ու արդյունալից՝ հանուն հայրենաշինության, հզոր Հայրենիք կերտելու և ազգապափաճման նվիրական գործի: Ինչպես միշտ, այսօր ևս մեր Եկեղեցին իր ժողովրդի կողքին է, իր բուն առաքելությանը զուգընթաց՝ տեղերում նպաստելով հայրենաշինության գործին: Ներքին թե արտաքին Սփյուռքում մեր Եկեղեցու Հայրերն օգնում, աջակցում և սատարում են Հայաստանի դեսպանություններին՝ ծառացած խնդիրները համատեղ ուժերով լուծելու ուղղությամբ: Այդ համագործակցությունը տվել և տալիս է իր պտուղները:

Այո՛, այսօր մեր ժողովրդի և Հայրենիքի շահերը պահանջում են, որ պետությունն ու Եկեղեցին մշտապես լինեն կողք-կողքի, մշտապես համագործակցեն: Սակայն այդ համագործակցությունը պետք է լինի ըստ պատշաճի, փոխըմբռնման ու փոխհարգանքի պայմաններում: Համագործակցություն, ուր բացառվի միջամտությունը: Ինչպես Եկեղեցին չպետք է ընդգծի իր կեցվածքը, ասենք աշխարհիկ իշխանությունների ընտրություններում, այնպես էլ պետական իշխանավորները պետք է փորձեն զերծ մնալ ինչ-ինչ գալթակղություններից և սին հեռանկարների պատրանքներից՝ չմիջամտելու համար Եկեղեցու գործերին: Քանզի դրանով իսկ կխաթարվի փոխվստահության և միասնության ճշմարիտ ոգին: Առաջին հայացքից աննշան թվացող այս հանգամանքը անարդարության սերմ կդառնա և ծիլեր կարծակի համայն հայության մեջ և կվերածվի վնասի:

Փորձենք այսօր միասնականության, բայց նաև արդարության ճանապարհով անցնելու օրինակ տալ մեր ժողովրդին և սրբազրել նախկինում թույլ տված սխալները: Մենք դաս ունենք առնելու հենց մեր պատմությունից:

Վերստին ողջունելով այս խորհրդածողովը՝ ցանկանամք, որ այն օգնի Հայաստանի անկախության նոր ուժով զորագած Սփյուռքին վեր կանգնելու իր ներհամայնքային ճոճիմ վեճերից, նեղկուսակցական շահերից, որպեսզի ազգովի հնարավորություն ունենանք լծվելու համահայկական խնդիրների լուծմանն ու իրականացմանը, որի հիմքում պետք է լինի Նորանկախ Հայաստանի Հանրապետության հզորացումը: Խոսելով ամուր և բարգավաճ հայրենիք ունենալու տեսիլքի մասին, հարկ է մեկ անգամ ևս վերադառնալ մեր Տիրոջ՝ Հիսուսի պատգամը. մեր տունը չկառուցենք ավազի վրա, այլ ժայռի, այսինքն՝ պինդ ու անսասան հիմքի, որպեսզի դրսից եկող ոչ մի քամի, ոչ մի հողմ, բնական ու անբնական ոչ մի աղետ չավերի, չքանդի այն:

Թող Ամենակարող Աստված Իր բարեգութ Աջով հովանի լինի մեզ վրա՝ այս նվիրական գործընթացի իրականացման ճանապարհին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք մեր օրհնությունը և հավատքի բարի մաղթանքները Հայաստան-Սփյուռք անդրանիկ համաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին, հյուրերին և բոլոր նրանց, ովքեր ջանք չեն խնայել իր տեսակի մեջ այս եզակի հավաքը կյանքի կոչելու գործում: